ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ
НОРАШЕНСКИЙ АМАЙНКАПЕТАРАН

N 62 15/04/2019թ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Արարատի մարզի Նորաշեն համայնքի ավագանու թիվ 03 նիստի արձանագրությունը:

Առդիր 2 թերթ:

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՊԵՏ՝ Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ
ՀԵՌ. 098 00 80 85

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<05>> ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 03

2019թվականի մարտի 5-ին ժամ 11:00- ին Նորաշեն համայնքում գումարվեց ավագանու նիստ, ավագանու վեց անդամների մասնակցությամբ.

1.Վահագն Մինասյան
2.Գարիկ Սարգսյան
3.Լիպարիտ Եփրեմյան
4.Գեղամ Մեսրոպյան
5.Էդուարդ Չորանյան
6.Սոս Ղազարյան

Բացակայում էին Արտակ Հարությունյանը և Հովհաննես Գրիգորյանը:

Նիստը նախագահում էր համայնքի ղեկավար Ն. Գրիգորյանը
Քարտուղարում էր Ք. Ղազարյանը
Նիստին մասնակցում էին աշխատակազմի աշխատակիցներ՝ Ս. Միքայելյանը, Մ. Ստեփանյանը, Մ.Խաչատրյանը, Մ. Ֆահրադյանը, Ա. Աբրահամյանը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաստատման հետևյալ օրակարգը

1. Նորաշեն համայնքի 2019 թվական «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը» սահմանելու մասին:

2. .2019թվականի համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակի ու պաշտոնային դրույքաչափերի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների դրույքաչափերի և հաստիքացուցակների հաստատման մասին:

3.Համայնքի 2018թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

4.Նորաշեն համայնքի 2019թվականի բյուջեի քննարկման և հաստատման մասին:

5.Նորաշեն համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.9288հա այլ հողատեսքի հողամասի օտարման մասին:

6. Համայնքային սեփականություն հանդիսացող 24հա հողատարածքները 2019թ-ին մեկ տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

7.Համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին:

8.ՀՀ օրենսդրությամբ Նորաշեն համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին:

9.Համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական և շրջանառու միջոցների 2018թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

10.Նորաշենի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովում ընդգրկված ավագանու անդամների քանակական և /կամ/ անհատական կազմի մասին:

11.Նորաշեն համայնքի փաստացի բնակվող Վարվառա Արևշատի Զավենյանի դիմումի քննարկում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով՝

Ավագանին որոշեց

Հաստատել հետևյալ ներկայացված օրակարգը

Կողմ՝ 2 Լիպարիտ Եփրեմյան
Վահագն Մինասյան

Դեմ՝ 3 Էդուարդ Չոբանյան
Գարիկ Սարգսյան
Գեղամ Մեսրոպյան

Ձեռնպահ՝ 1 Սոս Ղազարյան

2 կողմ, 3 դեմ և 1 ձեռնպահ ձայնով օրակարգի հաստատման որոշումն չընդունվեց:

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ